

Ի լուր երգոց քոց անուշիկ
 Թողուն թրուունքն ըզդայլայլիկ,
 Եւ յորսորդացն անապորոյն
 Խնայէ յաւուրցդ անմեղութիւն :

Խանդակաթեալ բայց քո հոգին
 Ընդ յիշատակ ինչ ցաւագին ,
 Բզտիրեւոյ զաղէտըս քեռ
 Թըւի անդուլ յար յեղյեղէլ :

Ըւանդ , խորհուրդք իմ թախծալից
 Ինձ դառնաղէտ եւս տան կրակիծ .
 Օ անցեալ չարիս արտասուես դու ,
 Ես ըզտաղաուկս ողբամ զայժմու :

Եւ բարեխնամ մինչ բընութիւն
 Սեղմել ճըգնի զքո տըրտմութիւն ,
 Տառաչանացս իսկ իմոց հեշտ
 Բուռն է ինձ հարկ տալ ըզհրաժեշտ :

ՅՈՎՆ . ՄԿՐՏԻՉ ՌՈՒՍՈՅ

Ազգային սրահիստի մը երգ :

Սեկնեցայ հայրենեացն իմ աստ մընալով ,
 Օտար աշխարհ թափառելով մաշելով .
 Պանդուխտ եւ նրժդէհ վըշտակիր մարմնով ,
 Ի յընտանեաց եղբարց կարօտ մընալով :

Օտար աշխարհ թափառ՝ չունիմ դադարում ,
 Տարաբերեալ ծրփիմ նըման ծովերուն .
 ԸՏ եւ կասկածք եւ վիշտք անթիւ անպատում ,
 Ի յընտանեաց եղբարց կարօտ մընալով :

Վիշտս ի աւազակաց , վիշտս ի սուտ եղբարց ,
 Վիշտս ի հրապուրանաց անօրէն ազանց .
 Ըրհաւիրք ահարկուք զետ ջուրց հոսանաց
 Պաշարելով անձն իմ , մնացի կարօտով :

Ստորագլուխ կարկամեալ կամ երկիւղալից ,
 Խանգարեցի ուսումն ի դէմն ամենից .
 Թէպէտ կամ ենթադրեալ յերկիր բարելից ,
 Բայց ոչ ունիմ հանգիստ , մնացի կարօտով :

Երբեքալ զեգերիմ ի յայս կենցաղում ,
 Պահ մի ուրախանամ , հաղար պահ տըրտում .
 Յայգ եւ ցորեկ տագնապ ահ եւ հառաչումն ,
 Ըշտղելով ի հոգս , մնացի կարօտով :

Արբուհի կոյս , օգնեա ինձ տառապելոյս ,
 Կըսկըժագին տառապելոյս ցաւելոյս .
 Բարեխօսեա առ Տէր ողորմիլ գերուս ,
 Հանել զիս ի բանդէ , մնացի կարօտով :

Ինձ ողորմեա , Յիսուս բանըդ հայրական ,
 Ըջաւինիմ ի քեզ , կենաց դաւազան .
 Թէպէտ եմ մեղաւոր , գօլով անարժան ,
 Սի թողուր զիս ի սպառ , մնացի կարօտով :

